«Հաստատում եմ»
ԵՊՀ պրոռեկտոր
Է. Վ. ԱՍՐԻՅԱՆ
18.02.2020

ԿԱՐԾԻՔ

Լուսինե Ասատուրի Տանաջյանի
«Սոցիալական փոփոխությունները հայկական սփյուռքում
(Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն)»
թեմայով Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հաստատված է ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի 2020 թ. փետրվարի 13-ի նիստում (արձանագրություն թիվ 5): Նիստին մասնակցում էին Ա. Եղիազարյանը, Հ. Մարտիրոսյանը, Ա. Հովհաննիսյանը, Է. Հովհաննիսյանը, Տ. Մինասյանը, Գ. Մխիթարյանը:

Արդի հայկական սփյուռքի առանձին համայնքների էթնոսոցիոլոգիական հետազոտությունները ներկայումս հույժ կարևոր ու պահանջված են՝ դրանք խորությամբ ճանաչելու, եղած խնդիրները բացահայտելու, սփյուռքահայ հատվածի սոցիալական կառույցը, գործընթացներն ու երևույթները հստակեցնելու և այլ առումներով: Նշվածի համատեքստում կարևորվում է Լուսինե Ասատուրի Տանաջյանի «Սոցիալական փոփոխությունները հայկական սփյուռքում (Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» թեմայով Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը: Հեղինակը Բեյրութի, Թեհրանի, Լոս Անջելեսի հայկական համայնքների վերլուծության հիման վրա ներկայացրել է սոցիալական տեղաշարժերի հիմնական միտումները սփյուռքի տարբեր հատվածներում:

Ատենախոսությունը գրվել է հայերեն և օտարալեզու տարաբնույթ սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության, ինչպես նաև դաշտային հետազոտությունների և համացանցային նյութերի հիման վրա՝ վերլուծական, պատմահամեմատական և պատմանկարագրական մեթոդաբանությամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

Ներածությունում ներկայացված են թեմայի կարևորությունն ու արդիականությունը, գիտական նորույթը, աշխատանքի նպատակներն ու խնդիրները, գրականության համառոտ տեսությունը, մեթոդաբանական հիմքը:

Ատենախոսության առաջին գլխում ընդհանրական ձևով ներկայացված է սոցիալական փոփոխությունների էությունը էթնիկության համատեքստում: Երկրորդ գլխում խոսվում է հայկական սփյուռքում առկա սոցիալական գործընթացների առանձնահատկությունների մասին: Երրորդ գլուխը նվիրված է արդեն Բեյրութի, Թեհրանի, Լոս Անջելեսի հայկական համայնքների համեմատական վերլուծությանը: Եզրակացության մեջ համակարգված ձևով ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները:

Ինչպես և յուրաքանչյուր ուսումնասիրություն, Լ. Տանաջյանի ատենախոսությունն էլ զերծ չի մնացել որոշակի թերություններից, որոնց վերաբերյալ ներկայացնում ենք որոշ դիտարկումներ:

1. Չնայած իր բավականին կուռ կառուցվածքին՝ ատենախոսության ներածությունը թերևս կարելի էր ներկայացնել առավել համակարգված ձևով՝ առանձնացնելով արդիականության, գիտական կարևորության, նպատակների, խնդիրների, մեթոդաբանության և այլ բաժինները, որը, ի դեպ, կատարված է ատենախոսության սեղմագրում:

2. Օգտագործված օտարալեզու բառերը (օրինակ՝ օպերացիոնալիստական, պրեստիժային և այլն) կարելի էր առաջին անգամ օտարահունչ տեսքով կիրառելուց և բացատրելուց հետո այնուհետև ներկայացնել արդեն հայերեն համարժեքներով:

3. Ներկայացված գրականության ցանկը կարելի էր համակարգել ընդունված ձևով՝ ըստ սկզբնաղբյուրների, մամուլի, մենագրությունների և գիտական հոդվածների առանձնացված բաժինների:

Սակայն ներկայացված դիտողությունները, որոնք Լ. Տանաջյանի աշխատանքին արդեն հրատարակության ներկայացնելիս առավել համակարգված տեսք հաղորդելու ցանկության արդյունք են, չպետք է որևէ ազդեցություն ունենան ատենախոսության դրական գնահատականի վրա: Ատենախոսը հաջող կերպով կատարել է իր առջև դրված խնդիրը՝ վեր հանելով և վերլուծելով թեմային վերաբերվող հանգուցային հարցերը: Ատենախոսության տեքստն ընդհանուր առմամբ գրագետ է: Աշխատանքն ունի գիտական, գործնական-կիրառական նշանակություն:

Որոշեցին – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից, գտնում է.

Ատենախոսությունը, իր հիմքում դրված դաշտային հետազոտությունների արդյունքներով և բազմալեզու գրականությամբ, իրենից ներկայացնում է գիտական և կիրառական առումով կարևոր և արդիական աշխատություն:

Լուսինե Ասատուրի Տանաջյանի «Սոցիալական փոփոխությունները հայկական սփյուռքում (Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» թեմայով Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը

բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Լուսինե Ասատուրի Տանաջյանը, արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ,
Պ.Գ.Դ., ԴՈՑԵՆՏ՝ Ա. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Պ.գ.դ., դոցենտ Ա. Ս. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

18.02.2020 թ.